ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանին 2018 թվականի հոկտեմբերի 1-4-ը Ղազախստանի Հանրապետություն (Աստանա) գործուղելու արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սուրեն Քրմոյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ հոկտեմբերի 1-4, Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Աստանա

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ՝ Տանյա Ռադոչայ

Գործուղման նպատակը՝ Եվրոպական և Կենտրոնական Ասիայի ազգային վիճակագրական գրասենյակների և ոլորտային նախարարությունների TransMonEE ցանցային հանդիպմանը մասնակցություն (Անչափահասների արդարադատության և անչափահասների նկատմամբ բռնության ոլորտում վիճակագրության հավաքագրում)

Քննարկված թեմաները՝

Եվրոպական և Կենտրոնական Ասիայի ազգային վիճակագրական գրասենյակների և ոլորտային նախարարությունների TransMonEE ցանցային հանդիպման ընթացքում քննարկվել են արդարադատության մատչելիության և երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության, տարածման և դրանց օգտագործման բարելավման վերաբերյալ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Եվրոպական և Կենտրոնական Ասիայի ազգային վիճակագրական գրասենյակների և ոլորտային նախարարությունների TransMonEE ցանցային հանդիպումն անցկացվեց փորձագետների և վերջիններիս խմբերի ելույթների, խմբային քննարկումների և լիագումար նիստերի ձևաչափով:

Ամենամյա այս հանդիպումը հնարավորություն է տալիս քննարկել ազգային վիճակագրական գրասենյակների կողմից երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրների վերաբերյալ տվյալների հավաքագրումը TransMonEE տվյալների բազայի միջոցով:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման 16-րդ նպատակին հասնելու համար Համաժողովի ընթացքում հատուկ ուշադրություն դարձվեց երեխաների նկատմամբ բռնության ցուցանիշների վրա:

Այս տարի առանձնակի ուշադրության արժանացած արդարադատության մատչելիության, երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալներն իրականում ունեն սկզբունքային նշանակություն: Բռնությունը շարունակում է մնալ ամբողջ աշխարհում երեխաների կյանքի անբաժանելի մասը՝ անկախ նրանց սոցիալական և տնտեսական հանգամանքներից, մշակութային, կրոնական և ազգային պատկանելությունից: Միևնույն ժամանակ, սակայն, առկա է դրա բնույթի և մասշտաբի վերաբերյալ հստակ և հուսալի տվյալների սահմանափակ բազա: Վերջին հանգամանքն ինքնին ազդում է բռնության վերաբերյալ ստույգ տվյալների հավաքագրման, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության ռազմավարության և բյուջեի մշակման պետության կարողությունների վրա:

Ցանցային հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկեցին հետևյալ հարցերը՝

- Երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման և հետազոտությունների անցկացման հետ կապված մեթոդաբանական խնդիրները և էթիկական նորմերը,
- Այդ տվյալների հավաքագրման, վերլուծության, տարածման և օգտագործման կատարելագործմանն ուղղված մոտեցումները,
- Երեխաների արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ պետությունների 2016 թվականի վերլուծական զեկույցների հիմնական եզրահանգումների վերլուծություն,

- TransMonEE տվյալների հավաքագրման գործիքների դիտարկում, քննարկում և անհրաժեշտ հանձնարարականների ներկայացում՝ ուղղումներ կատարելու համար:

Եվրոպական և Կենտրոնական Ասիայի ազգային վիճակագրական գրասենյակների և ոլորտային նախարարությունների TransMonEE ցանցային հանդիպման ժամանակ ելույթով հանդես է եկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ, անչափահասների արդարադատության խորհրդի նախագահ Սուրեն Քրմոյանը:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալն իր ելույթում ներկայացրեց Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջև ձևավորված սերտ համագործակցությունը արդարադատության մատչելիության և երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման ոլորտում, ինչպես նաև շեշտեց Հայաստանի Հանրապետության՝ «Վերջ տանք երեխաների նկատմամբ բռնությանը» ցանցի հավակնող երկիր դառնալուց հետո այդ ոլորտում ձեռնարկվող քայլերն ակտիվացնելու կարևորությունը՝ որպես երեխաների հանդեպ բռնությունների վաղ հայտնաբերման, կանխարգելման և արձագանքմանն ուղղված բարեփոխումների հիմք:

Հայաստանի մասնակցության արդյունքները.

Եվրոպական և Կենտրոնական Ասիայի ազգային վիճակագրական գրասենյակների և ոլորտային նախարարությունների TransMonEE ցանցային հանդիպման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, անչափահասների արդարադատության խորհրդի նախագահ Սուրեն Քրմոյանը մի շարք կարևոր հանդիպումներ է ունեցել: Մասնավորապես, Ս. Քրմոյանը հանդիպել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակի ղեկավարի տեղակալի, Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Էլվիրա Ազիմովայի հետ, որի ընթացքում քննարկվել են արդարադատության ոլորտում երկու երկրների համագործակցության հետ կապված հարցեր (Էլեկտրոնային արդարադատություն, դաատական փորձաքննություն, պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ոլորտ): Նախարարի տեղակալը հանդիպել է նաև Ղազախստանի Հանրապետության դատական դեպարտամենտի ղեկավարի հետ, և քննարկել

են էլեկտրոնային արդարադատության ու էլեկտրոնային դատարանների հետ կապված հարցեր: Արդյունքում կողմերը հայտնեցին երկուստեք պատրաստակամություն երկու երկրների միջև դատաիրավական ոլորտում համագործակցության ընդլայնման վերաբերյալ: Ս. Քրմոյանը նշեց նաև հետագայում հայկական պատվիրակության աշխատանքային այց կազմակերպելու նպատակահարմարությունը՝ էլեկտրոնային արդարադատության ոլորտում Ղազախստանի Հանրապետության փորձն ավելի մանրամասն ուսումնասիրելու համար:

Ցանցային հանդիպմանը ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանի մասնակցությունը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների առավել արդյունավետ հավաքագրմանը, վերլուծությանը, տարածմանը և օգտագործմանը, ինչպես նաև երեխաների արդարադատության մատչելիության ապահովմանը: Բացի դրանից Ղազախստանի գործընկերների հետ հանդիպումների արդյունքներով ակնկալվում է ակտիվացնել Ղազախստանի իրավասու մարմինների հետ երկկողմ կապերն ու համագործակցությունը:

Հանդիպումը կնպաստի նաև չափման գործիքների ներդաշնակեցմանը, որպեսզի հնարավոր լինի ստանալ հուսալի, վավեր, համապարփակ և միջազգայնորեն համադրելի գնահատումներ:

ՀՀ արդարադատության
նախարարի տեղակալ՝

Սուրեն Քրմոյան